

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԺԽՏՈՂ ԹՈՒՐՔ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՍ

XX դարասկզբի հայ գրական-հասարակական, քաղաքական գործիչների շարքում առանձնահատուկ տեղ ունի Տիգրան Հովհաննիսյանը (1865–1921): Գործիչ, որի անունը թեև այսօր քիչ բան է ասում հանրությանը, սակայն նա ժամանակին եղել է ճանաչված ու հեղինակավոր անձնավորություն:

Թարգմանիչ, գրական գործիչ, իրավաբան Ս. Հովհաննիսյանն ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ապա՝ Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Զբաղվելով փաստաբանությամբ, միևնույն ժամանակ ուսուցչություն է արել Երևանի թեմական և Ներսիսյան դպրոցներում: 1899 թ. մեկնել է Շվեյցարիա, ուր մի քանի տարի մնալով, խորացել է իր մասնագիտության ուսումնասիրության մեջ, «դիտել է այդ երկրի ժողովրդական կենցաղն ու շրջավայրը»: Վերադառնալով Անդրկովկաս՝ աշխատել է Թիֆլիսի ու Բաքվի օկրուգային դատարաններում, վարել է Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության, Բաքվի Գրասերների ընկերության և տեղի «հայկական բյուրոյին կից «Վշտապատում» կոչված մասնաժողովի» նախագահի պաշտոնները: Գրականագիտական, իրավաբանական, թարգմանական գործերով հանդես է եկել անդրկովկասյան պարբերականներում¹: 1920 թ. հուլիսի 1-ին երդվյալ հավատարմատար Ս. Հովհաննիսյանը հաստատվել է Հայաստանի սենատի անդամ²: 1920 թ. նոյեմբերի վերջերին նա, ՀՀ պատվիրակության կազմում որպես խորհրդական («բարձրագույն դատական ատյանի անդամ»), հրավիրված է եղել մասնակցելու Ալեքսանդրապոլի բանակցություններին և դաշնագրի կնքմանը³: Խորհրդային կարգերի հաստատումից հետո աշխատել է ՀԽՍՀ Ժողկոմխորհի իրավաբանական բաժնում:

Ս. Հովհաննիսյանն ակտիվորեն մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած վնասների հաշվառման ու դրանց փոխհատուցման ուղղությամբ Թիֆլիսում 1918 թ. վերջից 1920 թ. սկիզբը Հովհ. Թումանյանի ղեկավարությամբ գործած «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքներին⁴: Նա գլխավո-

¹ Տե՛ս Աղբյուրի Ակունքը, 1909, պր. I, էջ 17, ՊԲՀ, 2002, № 2, էջ 290: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 574:

² Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), Երևան, 1998, էջ 352:

³ Ալ. Խ ա տ ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 294:

⁴ Քննիչ հանձնաժողովի գործունեության մասին մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող, առաջաբանի և ծանոթ. հեղինակ՝ Ան. Զաքարյան, Երևան, 2005:

րել է վերջինիս քրեական բաժինը, հաճախ էլ փոխարինել Քննիչ հանձնաժողովի նախագահին: Խոսելով իր կատարած աշխատանքների մասին՝ Ս. Հովհաննիսյանը 1919 թ. փետրվարի 8-ին հանձնաժողովի նախագահին ուղղած զեկուցագրի մեջ մասնավորապես գրել է. «...բացի իմ բաժինը ղեկավարելուց, ուսումնասիրել եմ հայկական վերջին ջարդերին վերաբերող գրականությունը և պատրաստել «Տաճիկ կառավարությունը և իթթիհատը մարդկության դատարանի առաջ» վերնագրով մի աշխատություն, որի նպատակն է հերքել տաճիկ կառավարության և իթթիհատի արդարությունը և հայ ժողովրդի մեղավորությունը փաստաբանող երկու գրքերի բովանդակությունը:

Այդ աշխատությունս պատրաստված էր այն նպատակով, որ մեր Հանձնաժողովի ծախքով տպվեր հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն, բայց Հանձնաժողովի նյութական սուղ վիճակը ի նկատի ունենալով ես սկսեցի այդ աշխատությունը տպել «Հառաջ» թերթում»⁵:

Ս. Հովհաննիսյանի հիշյալ աշխատությունը հրապարակվել է Թիֆլիսում լույս տեսնող «Հառաջ» թերթում՝ «Թերթոն» խորագրի ներքո 1919 թ. փետրվար – մարտի մի քանի համարներում: Որքան հայտնի է, հայ իրականության մեջ սույն աշխատանքը Հայոց ցեղասպանությունը ժխտող կեղծարարների դեմ տպագրված եթե ոչ ամենաառաջին, ապա առաջին գործերից մեկն է: Առայսօր այն անձանթ է ոչ միայն լայն հանրությանը, այլև մասնագետներին: Աշխատությունը հիմնավոր, փաստարկված, մասնագիտական հմտությամբ ու խորությամբ գրված ուսումնասիրություն է, որի հրապարակումը, դրա հետ ծանոթությունը, կարծում ենք, մեր օրերում էլ իր նպաստը կրերի Հայոց ցեղասպանությունը ժխտել փորձողների դեմ պայքարի գործին:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՏԱՃԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻԹԹԻՀԱՏԸ
ՄԱՐԴԿԱՌԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Համաշխարհային պատերազմը վերջացավ:

Արդեն սկսվել են Խաղաղության վեհաժողովի նախնական նիստերը:

Ուրիշ մեղադրյալների և մեղադրողների շարքում՝ այդ միջազգային դատարանի առաջ անշուշտ կանգնած պիտի լինեն նաև տաճիկ կառավարությունն ու Իթթիհատը և հայ ժողովուրդը:

Երկու կողմերն էլ սպասում էին այդ օրին, տաճիկները՝ մինչև անցյալ տարվա վերջը՝ այն հավատով, թե իրենց բարեկամներին ու մեղսակիցներին է պատկանելու վճռական ձայնը դատավճիռը կայացնելիս:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 101–102:

Երկուսն էլ նյութեր էին պատրաստում իրենց դատը պաշտպանելու մարդկության այդ ասյանի առաջ:

Հայությունը, որ պատերազմի գրեթե առաջին օրերից աչք չի բաց արել կոտորածներին, շատ քիչ բան է կարողացել անել այդ ուղղությամբ, և եթե չլինեք հայտնի հայասեր Լորդ Բրայսի գիրքը, կարելի է ասել, որ առհասարակ ոչ մի լուրջ բան հրապարակ չի հանված մինչև այսօր՝ տաճիկ ժողովրդի մարդակեր վարիչներին նշավակության սյունին գամելու համար:

Տաճիկներն ավելի նպաստավոր պայմանների մեջ էին գտնվում. նրանց տրամադրության տակ էին և պաշտոնական դիվաններ և պոստ ու հեռագրաթել, և դրամ, և տպարան ու թուղթ, և գերման մտավորական ուժեր, մի խոսքով՝ ամեն ինչ, որպեսզի կարողանային «անվիճելի» փաստերով հերքել իրենց վրա բարդված մեղադրանքները, եթե նրանք անհիմն լինեին, և ապացուցել հայ ժողովրդի մեղավորությունը, եթե նա հիրավի մեղավոր լինեք:

Եվ տաճիկները ձգտել են օգտագործել այդ նպաստավոր պայմանները, նրանք հրատարակել են այդ նպատակով մի ամբողջ գրականություն զանազան եվրոպական լեզուներով (գլխավորապես ֆրանսերեն), բայց այդ բոլոր հողվածաշարքերն ու գրքերը մի մսխալաչափ անգամ չեն կարող թեքել ի նպաստ նրանց՝ արդարադատության կշեռքի նժարը, որովհետև ամբողջովին կազմված են կեղծիքներից, ստույթուններից, սուփեստություններից և լավագույն դեպքում՝ սխալներից:

Մեր այս ասածը ապացուցանելու համար մենք վերլուծության կենթարկենք տաճկական դատը փաստաբանող գրականության «ծանր հրետանին», տաճիկ կառավարության հրատարակած մեծածավալ գիրքը՝ «Aspirations et agissements révolutionnaires des comités arméniens avant et après la proclamation de la Constitution Ottomane», Constantinople, 1917 («Հայ կոմիտեների հեղափոխական ձգտումներն ու գործերը Օսմանյան Սահմանադրության հռչակումից առաջ և հետո», Պոլիս, 1917 թ.) և Վաշինգտոնի նախկին տաճկական դեսպան Ահմեդ Ռուստեմ բեյի գրքույկը՝ «La guerre mondiale et la gestion turco-arménienne», Berne, 1918 («Համաշխարհային պատերազմը և հայ-տաճկական հարցը», Բեռն, 1918 թ.):

Այդ երկու գիրքն էլ հրատարակված են իբրև պատասխան Լորդ Բրայսի կազմած և անգլիական Կապույտ գրքերի շարքում տպված «The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916» (London, 1916) ժողովածուի, որ մի փաստացի մեղադրական է տաճիկ կառավարության և առհասարակ իթթիհատական կուսակցության դեմ և երկուսն էլ միևնույն հիմնական մտքերն են արծարծում, միատեսակ ապացույցների վրա են հենվում և ձգտում են ոչ միայն պաշտպանել տաճիկներին, այլև մեղադրել հայերին: Տարբերությունը միայն հեղինակների գրելու ձևի և շնորհքի մեջ է: Կառավարական հրատարակության խմբագիրները անկասկած՝ թքով կպցրած սուտերը սոգետ ամբոխին հալած յուղի տեղ ընդունել տալու սովոր անտաշ ասիացիներ են, մինչդեռ Ահմեդ Ռուստեմ բեյը, ըստ երևույթին, դիվանագիտական թղթեր խմբագրելու մարզված մի անձնավորություն է, մտքի եվրոպական մշակույթով (նա լեհ հոր և տաճիկ մոր զավակ է) և դիպլոմատիկական ձիրքով (ըստ երևույթին ենք ասում, որովհետև մեզ թվում է, թե «Ja

guerre mondiale»-ի իսկական հեղինակը կամ խմբագիրը մի գերմանացի պիտի լինի, որովհետև տաճկական դատի այդ պաշտպանը շատ հաճախ է շեղվում բուն նյութից՝ գերմանացիների օգտին ջերմ պաշտպանողական ճառեր արտասանելու համար):

Սակայն նախքան բուն նյութին անցնելը՝ թող թույլ տրվի մեզ մի նախնական դիտողություն ևս անել:

Ամենալավ դատավորն անգամ չի կարող հիմնովին ստուգել վիճող կողմի առաջադրած բոլոր փաստերը, երբ նրանք ամբողջ հատորներ են կազմում, ինչպես հայ-տաճկական խնդրում:

Այդպիսի դեպքերում դատավորի աչքում ահագին նշանակություն է ստանում մեղադրանքը կամ պաշտպանությունը փաստաբանողի անձնավորությունը, ոչ միայն նրա ազնվությունն ու բարեխղճությունը, այլև նրա զգուշավորությունն ու լրջմտությունը փաստերի ընտրության մեջ:

Համեմատենք այդ տեսակետից Լորդ Բրայսի աշխատությունը տաճկական երկու գրքերի հետ:

Լորդ Բրայսի անադարտ անունը և գիտնական հռչակը ինքնին որոշ գրավականներ են անաչառ ընթերցողի համար: Սակայն հարգելի Լորդը չի բավականացել դրանով. նա անհրաժեշտ է համարել մանրամասն բացատրել իր գրքի առաջաբանում, թե ինչ կերպ և ինչ աղբյուրներից է քաղել իր բերած փաստերը. նա ինքը որոշել է նաև նրանց ապացուցական կշիռը, առաջին տեղը տալով տաճիկների քաղաքական բարեկամ գերմանացիներին՝ վկայություններին, երկրորդը՝ չեզոք պետությունների հպատակների ցուցմունքներին և վերջին տեղը՝ հայերի վկայություններին, որոնցից ընտրել է միայն այն ցուցմունքները, որոնք հաստատվում են առաջին երկու տեսակ վկայություններով կամ առարկայական (объективный) փաստերով: Այնուհետև, հեղինակը շեշտում է, որ ժողովածուի մեջ տեղ են գտել միմիայն ականատեսների վկայություններ և հատկապես այնպիսի ցուցմունքներ, որոնք տրված են դեպքերից շատ ժամանակ չանցած, երբ անցքերի տպավորությունը թարմ պիտի լիներ վկայողի հիշողության մեջ: Այդ էլ բավական չէ: Հավաքած փաստերի մասին իր ունեցած կարծիքը ստուգելու համար, գերզգույշ անգլիացին իր ժողովածուն, լույս ընծայելուց առաջ, ներկայացրել է երկու անգլիական լուրջ գիտնականների (պատմաբան Ֆիշտրի ու արևելագետ Մյոռեի) և մի ամերիկական ականավոր իրավագետի (Մուրֆիլդ Ստորիի) դատին և միմիայն այն ժամանակ, երբ այդ երեք ձեռնհաս գնահատողները հայտնել են, որ ժողովածուի մեջ բերված վկայությունները կարող են դիմանալ ամենախիստ քննադատության և հաղթահարել ամեն տեսակ կասկած, նա հրատարակել է այդ վկայությունները, իբր հավաստի ապացույցներ:

Այդպիսի զգուշավորության ու փափկանկատության նշույլ անգամ չէր գտնիլ տաճկական դատը փաստաբանող գրքերում: Հայերին դահիճ և տաճիկներին՝ զոհ ներկայացնել ճզնող բոլոր վկաները, առանց բացառության, տաճիկներ են, ինչպես նաև նրանց հարցաքննողները, այն էլ այնպիսի հմուտ ու անաչառ հարցաքննողներ և ճշգրիտ արձանագրություն կազմողներ, ինչպես տաճիկ ոստիկանները: Հա-

յերի ապստամբությունն ապացուցող հատվածներ են բերված տեղ-տեղ չակերտների մեջ առանց աղբյուրը ցույց տալու: Հայ անհատների մասնավոր նամակների բովանդակությունն է տպված, առանց հիշատակելու, թե ինչպես են ընկել տաճիկների ձեռքը այդ նամակները և ինչ ապացույց կա, որ այդ «նամակները» տաճիկ ոստիկանության թխածները չեն: Հայտնի չէ նմանապես, թե ով է թարգմանել հայերենից այդ նամակները և առհասարակ մեջբերած հայերեն փաստային նյութը, մինչդեռ թարգմանի հստությունից ու բարեխղճությունից շատ բան է կախված այդպիսի դեպքերում:

Ճիշտ է, կառավարական հրատարակության մեջ, իբր հավելված, 146 երես նմանահանություններ (Ֆաքսիմիլներ) և լուսանկարների ընդօրինակումներ են տպված, իբր անհերքելի «դոկումենտներ» (թվով 122), բայց հենց այդ «դոկումենտներն» են, որ մեզ ընձեռում են ամենաջախջախիչ ապացույցները հայության դեմ ուղղված ֆիլիպպիկաների սնամեջության և այդ ֆիլիպպիկաները հաստատող փաստերի կեղծության: Եվ այդպես՝ ամեն անգամ, երբ տաճիկ դահիճների պաշտպանները փորձում են լուրջ դատավորի համար ընդունելի որևէ ապացույց բերել, իսկույն երևան են հանում իրենց փաստաբանական սնանկությունը և իրենց դատի ակներն անարդարությունը:

Բզուր չէ, որ խորամանկ Ահմեդ Ռուստեմ բեյը իր գրքի մեջ չի սովել ոչ մի նմանահանություն կամ լուսանկար: Առաջին գիրքը վաճառքի չի հանվել (գրքի վրա չի նշանակված ոչ գինը, ոչ տպարանը, ոչ էլ պահեստը) և հայերի ձեռքը չպիտի ընկներ, ուստի նրա մեջ կարելի էր տպել նամականիշները (почтовая марка) դերասան Ադամյանի և ծովանկարիչ Այվազովսկու, զուտ գեղարվեստի այդ երկու տիպիկ ներկայացուցիչների պատկերներով (№ 39 և 40 «դոկումենտներ», հավելված էջ 59 և 61) և հրամցնել գործին անտեղյակ եվրոպացիներին ու ամերիկացիներին՝ իբր անհերքելի ապացույցներ հայ ժողովրդի հեղափոխական ձգտումների ու արարքների: Կամ լուսանկարել մի պատ ու հավատացնել, որ դա ճակատակողմն է մի սգկիթի, որ «հայերը եկեղեցի են դարձրել», մինչդեռ պատի վրայի արձանագրությունը ռուսերեն է և տաճարը նվիրված է ռուսաց սուրբի (լուսանկարի՝ գրքում գետեղված պատճենը աղոտ է դուրս եկել, արձանագրությունն էլ սլավոնական տառերով է, այնպես որ հայերեն ու ռուսերեն պիտի իմանալ և ուշադրությամբ, նույնիսկ խոշորացույցով պիտի զննել կեղծիքը երևան հանելու համար)*: Եվ կամ գրքի մեջ տպել մի ոչ հեղափոխական հայ կուսակցության կեղրոնական կոմիտեի նամակի ֆրանսերեն թարգմանությունը շինծու բովանդակությամբ և ներկայացնել, իբր ապացույց, որ բոլոր տաճկահայ կազմակերպությունները, նույնիսկ բարեգործական ընկերությունները համաշխարհային պատերազմից առաջ և նրա ընթացքում նույն նպատակներին են ձգտել, ինչ որ հեղափոխական կուսակցությունները, այն է՝ կործանել Տաճկաստանը, և իրենց այդ մեղադրանքին ավելի ևս կշիռ տալու համար գրքի հավելվածում տպել իբր թե այդ նամակի հայերեն բնագրի նմանահանությունը, որ ուշադրությամբ ու խոշորացույցով զննողը, այն էլ հայր իհարկե

* Ծան.— Առհասարակ այն նմանահանությունները, որոնց թարգմանությունը կամ բացատրությունը կեղծ է, անշուշտ, դիտմամբ շատ աղոտ են հանված: Տ. Հ.

կարող է համոզվել, որ նամակը անդամահատված է (անշուշտ դուրս են գցված մեղադրանքը բոլորովին ջրող կտորները), նմանահանված են միմիայն առանձին կտորներ, այնպես որ մի նախադասություն մնացել է առանց վերջի, մի ուրիշ պարբերություն գետեղված է առանց սկզբի և վերջապես այդ նմանահանված կտորների մեջ էլ միմիայն մի քանի տող է համապատասխանում ֆրանսերեն թարգմանության բովանդակությանը, այն էլ նրա անմեղ տողերին*:

Ահմեդ Ռուստեմ բեյը չէր կարող, իհարկե, իրեն թույլ տալ այդպիսի շռայլություն, քանի որ նրա գիրքը վաճառքի պիտի հանվեր (գինը 5 ֆրանկ է) և տարածվելով ընթերցողների լայն խավերում կարող էր անշուշտ ընկնել և հայերի ձեռքը: Նա բավականացել է միմիայն նրանով, որ իր գրքուկի հավելվածում, իբր «դոկումենտներ» արտասուպել է կառավարության հրատարակության մեջ տպված շինծու կամ խեղաթյուրված ֆրանսիական թարգմանությունները գոյություն չունեցող կամ բոլորովին տարբեր բովանդակություն ունեցող հայերեն նամակների, իրեն կողմից ավելցնելով միայն մի երևելի կեղծիք, որ նկատելու համար անհրաժեշտ է, որ ընթերցողը Ռուստեմ բեյի գրքից առաջ ուշադրությամբ կարդացած լինի կառավարության հրատարակությունը և լավ հիշողություն ունենա, որովհետև այդ կեղծիքը կայանում է նրանում, որ Ռուստեմ բեյը կառավարական հրատարակության խմբագիրների շարադրած լայնածավալ մեղադրականից վերցրել է մի հատված, հենց իրենց՝ խմբագիրների սեփական խոսքերը, և գետեղել իր գրքի մեջ իբր № 13 «դոկումենտ», վրան մակագրելով, թե դա Հ. Յ. Դաշնակցության նամակն է Դամասկոսի կոմիտեին:

Այդ մի քանի փաստն էլ բավական են ապացուցանելու համար, որ վերոհիշյալ երկու գրքերը, իրավաբանական ոճով ասած, չեն կարող ծառայել իբր դատաստանական նյութ մարդկության աստյանի առաջ, սակայն մենք կարևոր ենք համարում ապացուցանել, որ երկու գրքերի ամբողջ բովանդակությունը, թե իբր պաշտպանություն տաճիկ կառավարության և առհասարակ իթթիհաստական քաղաքակ-

* Ծան.– Որ տաճիկ կառավարության հաշիվը շատ էլ սխալ չի եղել, երևում է նրանից, որ այնպիսի մի մանրակրկիտ հետազոտող, ինչպես Լեոն է, «Տողովրդի Չայնի» վեց համարում (1918 թ. № 54, 61, 65, 68, 72 և 74) մանրամասն քննադատության է ենթարկել այդ հրատարակությունը և մի շարք լուրջ ու սրամիտ դիտողություններով ապացուցել նրա պատճառաբանության անհիմնությունը, բայց չի կարողացել նկատել և ոչ մեկը նրա կեղծիքներից և նույնիսկ մասամբ ազդվելով նրանցից խիստ ոճով հարձակվել է հայ հեղափոխական կոմիտեների վրա այն դիրքի համար, որ նրանք բռնել էին Օսմանյան Սահմանադրությունից հետո, մի բան, որ անպայման անարդար է մանավանդ Հ. Յ. Դաշնակցության վերաբերմամբ, որի քաղաքականությունը այդ օրերում եղել է իսկապես համապետական և գգուշավոր: «Այդ հեղափոխական գրականությունը,– գրում է իմիջիայլոց Լեոն,– բաղկացած շոնդալից կոչերից, ինքնագովական ու ազգամոլական հոխորտանքներից, վավերագրերի մեծ պաշար է մատակարարել թուրք կառավարության: Նրա ձեռքումն են դաշնակցականների ու հնչակյանների ընդհանուր ժողովների բնագիր արձանագրությունները, որոնց նմանահանությունները գրավում են բազմաթիվ էջեր «Aspirations»-ի հավելվածի մեջ: Բազմաթիվ են և մասնավոր նամակները, որոնցից լայնորեն օգտվում է կառավարությունը»: Տ. Հ.

անության և թե իբր մեղադրական հայերի դեմ, կեղծիքի, ստի, սուփեստության և սխալների մի կծիկ է:

Այդ ևս ավելի անհրաժեշտ է անել այն պատճառով, որ տաճիկ էմիսարները վաղուց ի վեր զրպարտության գործարաններ են բացել նաև Անդրկովկասում և այստեղ էլ մինչև օրս շարունակում են թխել տաճկական տիպի «դոկումենտներ»՝ «հայկական զազանությունները» և իրենց արբանյակների անմեղությունը ապացուցելու համար:

«Հառաջ», 5. II. 1919:

I

Կ Ե Ղ Մ Ի Ք Ն Ե Ր

Բերենք տաճկական կեղծիքների մի քանի նմուշներ:

«Aspirations»-ի բնագրի վերջին մասը, որ կրում է «Atrocités commises par les Arméniens» («Հայերի գործած վայրագությունները») վերնագիրը, սկսվում է Էրզրումի վիլայեթի մի դատական պաշտոնյայի (Քեմալ անունով) և Բլիջայի համայնապետի (Շուքրի անունով) զեկուցագրով՝ իրենց կատարած քննության մասին:

Այդ զեկուցագրի մեջ, որ հիմնված է տաճիկ վկաների երդումով տված ցուցմունքների վրա, ընթերցողը իմիջիայլոց կարդում է, թե Մամախաթունի մզկիթը եկեղեցի է դարձված (էջ 379–380):

Եվ ահա այդ մեղադրանքը ապացուցանելու համար նույն գրքի հավելվածում (էջ 144) զետեղված է այդ «եկեղեցի դարձած մզկիթի» ճակատակողմի լուսանկարը (դոկումենտ №118) և տակին տպված՝ հետևյալ բառերը. «La mosquée de Mamma Hatoune convertie par les Arméniens en église» («Մամախաթունի մզկիթը, որ հայերը եկեղեցի են դարձրել»):

Անհերքելի ապացույց, այնպես չէ՞: Այո, սակայն ոչ այն մեղադրանքի, որ հայերի վրա բարդում են տաճիկները, այլ այն փաստերի, որ կեղծարարության մեջ տաճիկ կառավարության ու նրա արբանյակների հանդգնությունը չափ ու սահման չունի, որովհետև երբ ուշադրությամբ դիտում եք այդ աղոտ լուսանկարը, մանավանդ երբ զննում եք խոշորացույցով, տեսնում եք, որ եկեղեցու ճակատը կրում է հետևյալ բառերն արձանագրությունը՝ «Храм во имя Святителя Николая Мираикийского (հետևյալ բառը չի կարդացվում). освященный 25 марта (տարեթիվը չի կարդացվում) в память взятия штурмом Кавказа . . . (մեկ-երկու բառ չի կարդացվում) Мамахатуна»:

Ակներև է, որ եթե հայերը որևէ մզկիթ եկեղեցի դարձնեին, արձանագրությունը հայերեն կլիներ և տաճարը կնվիրեին հայ եկեղեցու հարգած սուրբերից մեկին և ոչ թե ռուսաց մի սուրբի:

Ահա և մի ուրիշ կեղծիք:

Տաճիկները ձգնում են ապացուցանել, թե հայ հեղափոխական կուսակցությունները, հատկապես Հ. Յ. Դաշնակցությունն ու Հնչակյան կազմակերպությունը,

սկզբից ի վեր դավաճանորեն են վերաբերվել տաճիկ պետության և ձգտել են բնաջնջել տաճիկ տարրը, և թե միննույն նպատակին են ձգտել, թեև դիմակավորված ձևով, նաև մյուս բոլոր հայ քաղաքական՝ անվանորեն ոչ-հեղափոխական կուսակցությունները, ինչպես օրինակ՝ Ռամկավար-սահմանադրական կուսակցությունը, և նույնիսկ բարեգործական ընկերությունները:

Ռամկավար-սահմանադրական կուսակցության վերաբերմամբ այդ մեղադրանքը ապացուցանելու համար տաճիկ կառավարությունը իր հրատարակության 118 էջում տպել է (ֆրանսերեն թարգմանությամբ) այդ կուսակցության կեղրոնական մարմնի մի նամակը, ուղղած նույն կուսակցության Աղեքսանդրիայի կոմիտեին (էջ 119) և զետեղել է այդ նամակի հայերեն բնագրի նմանահանությունը հավելվածի մեջ իբր -10 դոկումենտ:

Պետք է ասել, որ գրքի խմբագիրները «տաճկավարի» են նմանահանել նամակը՝ կտրատել են և մեջից դուրս քցել այն բոլորը, ինչ որ իրենց ձեռնտու չէ, այնպես որ մի տեղ նախադասությունը վերջ չունի, մի ուրիշ տեղ պարբերությունը՝ սկիզբ, և «Ֆաքսիմիլեի» մեջ պարզ երևում է, որ մի ամբողջ նամակ չէ այդ, այլ նամակի կտորտանք:

Ահա այդ նմանահանությունը (այն բառերի կողքին, որոնք պարզ չեն կարդացվում, և այն բառերի տեղ, որոնք ամենևին չեն կարդացվում, հարցական նշաններ ենք դրել):

Թիվ 55

20/5 մարտ

Ս. Ռ. Կուսակցության Աղեքսանդրիայի կոմիտեին

Աղեքսանդրեա

Միրելի ընկերներ,

Ստացած ենք ձեր հունվ. 24 / II թվակիր նամակը և շնորհակալ ենք Կեղրոնական Ակումբի նկատմամբ ձեր հայտնած ջերմ զգացմունքներուն համար: Կուսակցությանս կեղրոնական մարմինը կազմված է հետևյալ անդամներե. Տիրան Քելեկյան Ա. նախագահ, Օհ. Պելլիկյան Բ. նախագահ, Խաչիկ Բնկիլիզյան Ա. քարտուղար, Ս. (?) Բ. քարտուղար, Հայկ Խոճասարյան, Միհրան (?) գանձապահ, Տոթթ. Հակոբ Փոքճյան և Արշակ (?), (?) Մովսեսյան հրաժարված ըլլալով Կեղրոնական Ակումբին անդամութենե, ի մոտո պիտի կատարվի անոր հաջորդի ընտրությունը:

Մեր թիվ 4 շրջաբերականով համառոտակի բացատրում ենք արդեն մեր գործունեության ուղեգիծը: Բարենորոգումներու ծրագրին գործադրությունը ուղղամիտ և ձեռնհաս Ընդհ. Քննիչներու միջոցով ներգաղթին դուռը պիտի բանա, ապահովություն պիտի ներշնչե խելքով, դրամով, գիտությամբ և արհեստով օժտված ու զինված մեր բազմաթիվ հայրենակիցներուն վերադառնալու իրենց բազմաչարչար և արյունաքամ հայրենիքը, ուր իրենք պարտք պիտի ունենան (շարունակությունը

կտրված է և այնուհետև նմանահանված՝ ուրիշ կտոր, որի սկզբի բառը՝ «Գալով»-ից առաջ, ջնջված է):

Գալով ինքնապաշտպանության խնդրին, ոչ ոք կարող է ժխտել անոր իրավունքը, քանի որ բնական է ան և տարրական: Համաձայն Բ. Պատգմ. Ընդհ. ժողովի որոշման, Կեդրոն. Ակումբս կքաջալերե գործադրությունը այդ իրավունքի այդ միջոցներով, որոնք ցույց տրված են ներքին կանոնագրի բացառիկ միջոցներու գլխուն մեջ:

(Իրանից հետո տեղ է թողնված և այնուհետև կպցրած է հետևյալ նոր կտորը):

Անկարելիության նկատմամբ ինք ևս հաստատեց անոր որոշումները: Եթե կուզեք այս մասին ավելի մանրամասնություններ իմանալ, գրեցեք Նահանգ. Վարչության, որ ձեզ դրկեն այդ բանակցությանց արձանագրություններու մեկ պատճենը:

Ընկերական սիրալիր բարևներով
Ս. Ռ. կուսակց. Կեդր. Ակումբի
Քարտուղար Խչկ. Ինկիլիզյան
Նախագահ Տիրան Քելեկյան

Տպարանական տեխնիկական հարմարությունների բացակայության պատճառով հնարավորություն չունենալով այստեղ զետեղել այդ նամակի ֆրանսերեն թարգմանությունը («Aspirations», էջ 118), մենք տալիս ենք այդ «թարգմանության» հայերեն թարգմանությունը:

20 մարտի 1914 թ.

Ռամկավար կուսակցության
Աղեքսանդրիայի բաժանմունքին

Ընկերներ.

Ստացել ենք ձեր հունվարի 24 թվակիր նամակը և շնորհակալ ենք ձեզանից այն ջերմ զգացմունքների համար, որ հայտնում եք Պոլսի կենտրոնական բաժանմունքի նկատմամբ:

1. Ձերի հարցը հիմնական հարց է: Բնականորեն ոչ ոք չի կարող հերքել նրա անհրաժեշտությունը:

2. Մեր կեդրոնական բաժանմունքը, համակերպելով պատգամավորների խորհրդի որոշմանը, հայտարարում է, որ իր իրավունքները պահպանված են ներքին կանոնադրության հատուկ գլխի կանոնների համաձայն:

Միացնել մեր գործունեությունը ըստ նպատակների Հնչակյան Կոմիտեի հետ – ահա մեր ամենաջերմ ցանկությունը *:

* Ծան.– Գրքի խմբագիրներն են ստորագծել այդ տողերը: Տ. Հ.

Այդ նպատակին հասնելու համար է աշխատել մեր բաժանմունքը և աշխատելու է նաև ապագայում: Եվ դժվար էլ չէ այդ հարցում համաձայնության գալ Վերակազմյալ Հնչակյանների հետ, քանի որ, սկզբունքային տեսակետից, մեր մեջ ոչ մի տարաձայնության առիթ չկա:

Ներկայումս մեզ նույնքան անհրաժեշտ է կարելույն չափ շուտ միանալ, որքան և համերաշխ գործել: Այդ նպատակին հասնելու համար Ռամկավարի և Հնչակի ձեռնհաս խմբերը պիտի համաձայնության գան Դաշնակցության և Վերակազմյալ Հնչակի հետ:

Ռամկավար Կոմիտեի Պոլսի Կեդրոնական բաժանմունքի կողմից

Քարտուղար Խաչիկ Ինկիլիզյան
Նախագահ Տիրան Քելեկյան

Բնչպես տեսնում եք, ոչ մի նմանություն բնագրի և «թարգմանության» մեջ, բացի սկզբից, մեջտեղի մի քանի տողերից և ստորագրությունից:

Եվ ահա այդ «թարգմանությունը» զարդարում է նաև իր «տաճկական ճշմարտախոսությամբ» պարծեցող Ահմեդ Ռուստեմ բեյի գիրքը իբր «դոկումենտ» № 12 (էջ 163):

Նույնպես աղճատ կերպով են նմանահանված և նմանապես խեղաթյուր կերպով են թարգմանված «Aspirations»-ի մեջ նաև Հ. Յ. Դաշնակցության մի քանի նամակներ:

Օրինակ, իբր № 12 դոկումենտը տպված է «Դ-ի ընկերներին» մի նամակ, որ նույնպես կտոր-կտոր է նմանահանված և նույնիսկ առանց վերջավորության ու ստորադրության, իսկ նմանահանված մասերի մեջ էլ պարզ հանված է միայն այն հատվածը, ուր ասված է, թե Լիեժի ամբողջությունները չեն առնված, և ֆրանսիացիք մտել են Ալզաս (թեև Տաճկաստանը, ինչպես նամակի բովանդակությունից երևում է, դեռ պատերազմին չէր միջամտել այդ ժամանակ, բայց և այնպես տաճիկ կառավարության աչքում այդ տողերը անշուշտ ապստամբներին հատուկ մտայնություն են ցուցահանում), մինչդեռ մնացած հատվածները այնքան անորոշ են նմանահանված, որ շատ մեծ դժվարությամբ են կարդացվում, սակայն մեզ հաջողվեց խոշորացույցի օգնությամբ կարդալ, իմիջիայլոց հետևյալ նախադասությունը՝ «Երկրի ներկա տագնապալից հանգամանքներում անհրաժեշտ է, որ թուրքը, հայը, քուրդը, լինեն համերաշխ, որովհետև ընդհանուրի շահը այդ է պահանջում» (դրանից հետո նամակը կտրված է և կպցրած է այն կտորը, ուր խոսվում է Լիեժի մասին): Եվ ահա այդ վերին աստիճանի նշանակալից նախադասության հետքն անգամ չկա այդ նամակի ֆրանսերեն թարգմանության մեջ (էջ 129):

Բնչ խոսք, որ իսկական նամակում այդ կտորը կարդալու համար գրքի թարգմանիչները կարիք չունեին խոշորացույցի օգնության: Դրանից առաջ մի պարբերություն կա, որ սկսվում է հետևյալ բառերով. «Վահաբը Ռուսաստանի վրայով...» և որի մնացյալ մասը նմանահանության մեջ անհնար է կարդալ նույնիսկ խոշորացույցով, մինչդեռ թարգմանիչները այդ պարբերությունը ամբողջովին թարգմանել

են (անշուշտ սխալ-միայ), կնշանակի մեր վերն բերած պարբերությունը թարգմանիչները ավելի ևս լավ կարող էին կարդալ և դիտմամբ են բաց թողել շատ հասկանալի պատճառներով. նամակը գրված է Տաճկաստանում ընդհանուր գորակոչ հայտարարելուց հետո և հանկարծ այդ նամակում դաշնակցականները, այդ, ըստ Իթթիհատի, տաճիկ ժողովրդի արյունաքամ թշնամիները, այդ անուղղելի անջատականները (սեպարատիստները), Համաձայնության պետությունների այդ վարձկան գործակալները՝ իրենց գաղտնի գրագրության մեջ տաճիկ, հայի ու քուրդի համերաշխության գաղափարն են քարոզում, նրանց ընդհանուր շահով են առաջնորդվում և Տաճկաստանի տազնապալից վիճակովը մտատանջվում:

Այսպիսի թարգմանիչների մասին են ասել իտալացիք. «Traduttore-traduttore» («թարգմանիչները դավաճաններ են»):

Հ. Գ. – «Aspirations»-ի այն օրինակում, որ իմ ձեռքի տակն է, պակաս են 177-192 էջերը: Եթե ընթերցողներից որևէ մեկի մոտ կա այդ գրքի մի ուրիշ օրինակ, խնդրեմ գոնե մի օրով դնի իմ տրամադրության տակ:

Դառնանք այժմ Հ. Յ. Դաշնակցության ութերորդ ընդհանուր ժողովի արձանագրության նմանահանությանը, որ, պետք է ասած, պարզ է դուրս եկել (դռկ. № 9):

Ինչպես հայտնի է, այդ ընդհանուր ժողովը կայացավ համաշխարհային պատերազմի նախօրյակին:

Տեսնենք՝ ի՞նչ մեղադրական նյութ է մատակարարում այդ արձանագրությունը տաճիկ դատախազներին:

«Aspirations»-ում տպված են իսկապես քաղվածքներ այդ արձանագրությունից, որ այստեղ առաջ են բերում ամբողջովին:

«Հ. Յ. Դաշնակցության ութերորդ
ընդհ. ժողովի որոշումներեն.

Ք ա դ վ ա ծ ք ն ե ռ

«Հ. Յ. Դաշնակցության ութերորդ ընդհ. ժողովը տեղի ունեցավ Հայաստանի մեջ 1914 թ. հուլիս ամսին: Ժողովը տևեց երկու շաբաթ և ունեցավ 26 նիստ: Ժողովին հրավիրված էին (մեջ է բերված հրավիրված մարմինների ու գործիչների ցանկը, թվով 30):

«Ժողովին ներկա էին վճռական ձայնով 26 հոգի և խորհրդակցական ձայնով 4 հոգի, ընդամենը 30 հոգի:

«Քաղվածքներ որոշումներեն:

«Մեր դիրքը դեպի թուրք կառավարությունը.

«Նկատի ունենալով պետական այն նեղ և տարամերժ քաղաքականությունը, որով կրնորոշվի իթթիհատական կառավարություն իր գործունեությամբ և որուն արդյունք են տնտեսական, դպրոցական, վարչային և այլ պայմաններու մեջ բոլոր ոչ թուրք ազգություններու, հետևաբար և հայ ժողովրդի վերաբերմամբ գործ դրվող օրինական և հակաօրինական ճնշիչ միջոցները:

«Նկատի ունենալով մանավանդ կառավարության հետապնդած խափանարար ուղղությունը հանդեպ բարենորոգումներու արդեն իսկ աղճատված ծրագրի անշեղ գործադրության».

«Ընդհանուր ժողովը եկավ այն եզրակացության, որ կուսակցությունը շարունակելու է մնալ անհողորդ ընդդիմադիրի և անաչառ քննադատի դերին մեջ հանդեպ Իթթիհատի, պայքարելով անոր ազգայնական վնասակար և հակապետական քաղաքականության դեմ:

«Ժողովը չի ժխտեր գործակցության սկզբունք այն համապետական կարևոր (ստորագծումը բնագրինն է) խնդիրներուն համար, որոնք համապատասխանում են մեր կուսակցության ծրագրական պահանջներուն:

«Ծանոթ.– Ընկերներու մասնակի դիմումները կառավարության մոտ կրնան տեղի ունենալ միմիայն հանրային բնույթ կրող խնդիրներու համար»:

Ահա և բոլորը, ինչ որ տալիս է տաճկական հրատարակության նմանահանությունը:

Ինչպես տեսնում եք, վավերագրի թե բովանդակությունը և թե ոճը ոչ մի հակապետական, անջատողական կամ խռովարար շեշտ չունեն, այլ ընդհակառակը, ստորագծում են Հ. Յ. Դաշնակցության համապետական շահերով տոգորված լինելը և լոյալ ընդդիմադրականությունը:

Իհարկե, «Aspirations»-ի աշխատակիցները չէին կարող հարազատորեն թարգմանել այդպիսի մի կարևոր ժողովի այդքան մի նշանակալից որոշում: Եվ, հիրավի, նրանք իրենց թարգմանության միջոց (էջ 201) բոլորովին դուրս են գցել «ժողովը չի ժխտեր գործակցության սկզբունք այն համապետական կարևոր խնդիրներուն համար, որոնք համապատասխան են մեր կուսակցության ծրագրական պահանջներուն» պարբերությունը, ինչպես նաև «անաչառ քննադատ» ու «հակապետական» (Իթթիհատի քաղաքականության նկատմամբ) բառերը, «պայքարելով» խոսքին կցել են «vigourensement» (ուժգնորեն) մակբայը և վերջում ավելացրել մի ամբողջ նախադասություն «et éviteront tout contact avec lui en d'autres circonstances» («և կխուսափին որևէ առնչություն ունենալ նրա հետ ուրիշ հանգամանքներում»), – մի նախադասություն, որ, իհարկե, շատ չի փոխում բնագրի իմաստը, բայց, այնուամենայնիվ, բնորոշում է գրքի աշխատակիցների բարեխղճությունը (եթե ենթադրենք, թե բնագրում այդպիսի նախադասություն եղել է, այն ժամանակ այդ փաստը պիտի ապացույց ծառայի, թե որքան ճշտությամբ են նմանահանել գրքի աշխատակիցները ամենակարևոր վավերագիրները):

Ահա և մի նամակ, կարծեմ, Վազգենի ստորագրությամբ (ստորագրությունը լավ չի կարդացվում), գրված «Արևելյանին» (Արևելյան Բյուրոյին) պատերազմի նախօրյակին (1914 թ. հուլիսի 7-ին):

Ամբողջ նամակը բավական ճիշտ է թարգմանված (բովանդակությունը վերաբերում է կայանալիք ընդհանուր ժողովի կազմին), բացի վերջից, ուր շոշափվում են Տաճկահայաստանի քաղաքական վիճակը: Հիշենք, որ այդ այն ժամանակներն էին, երբ Տաճկահայաստանի երկու ընդհանուր քննիչները կամ մարզպանները

(գեներալ-ինսպեկտորները) պատրաստվում էին գնալ Պոլսից իրենց պաշտոնավայրերը:

Ահա այդ հատվածի բնագիրը (դոկումենտ № 16):

«Մարզպանները վաղուց ճանապարհված կլինեին, բայց աշխատում են իրենց իրավասությունների սահմանները ավելի լավ որոշել և գնալ այնտեղ զորեղացած ձևով: Մյուս կողմից աշխատում են միջազգային բնավորություն կրող պայմանադրություն հենց սկզբից նեթ հարգել տալ: Մենք հուսով ենք, որ նրանց ներկայությունը մի աստիճան ավելի ևս կբարվոքի հայերիս դրությունը և այսուհետև վերածնության գործը շատ ավելի կանոնավոր պայմաններում առաջ տարվի:

Թուրքահայերիս դրությունը օրեցօր լավանում է: Եվ այդ բանը պետք է նկատեն և գնահատեն ոչ միայն մեր ընկերները, այլև բոլոր հայերը:

Հուսով ենք, որ գեթ այսուհետև կաշխատեք ավելի կանոնավոր նամակագրություն ունենալ»:

Ահա այդ հատվածի ֆրանսերեն «թարգմանության» հայերեն թարգմանությունը:

«Մարզպանները՝ և շատ ուրիշ ընկերներ, թերևս արդեն ճանապարհված լինեն: Բայց պետք է աշխատել, որ սրանք ավելի ուժ ու հեղինակություն ունենան: Աշխատում են համակերպել միջազգային պայմանադրություններին: Թերևս այդպիսով հայերի դրությունը մինչև մի որոշ աստիճան բարվոքվի և վերանորոգությունը կստացվի ավելի կանոնավոր պայմաններում: Հուսով ենք, որ այսուհետև դուք ավելի ճշտապահ կլինեք ձեր նամակագրության մեջ: Ողջույններ»:

Տարբերությունը ակներև է: Բնորոշ են հետևյալ կետերը. նախ բոլորովին դուրս է գցված մի շատ նշանակալից պարբերություն, այն է՝ «թուրքահայերիս դրությունը օրեցօր լավանում է: Եվ այդ բանը պետք է նկատեն ու գնահատեն ոչ միայն մեր ընկերները, այլև բոլոր հայերը»: Երկրորդ՝ «հուսով ենք» բառը, երբ նամակագրության կանոնավորության է վերաբերում, ճիշտ է թարգմանված, իսկ երբ վերաբերում է հայերի դրության «մի աստիճան ևս բարվոքելուն», սխալ է թարգմանված, այն է՝ «հուսով ենք»-ի տեղ դրված է «թերևս» և բացի այդ «ևս» բառն էլ այնուհետև դուրս է գցված, որպեսզի կարդացողները չիմանան, որ նամակագիրը հայերի դրությունը արդեն «բարվոք» է համարում. երրորդ՝ մարզպանները դաշնակցական ընկերների շարքն են դասված և չորրորդ՝ այդպիսի ուղտեր կլանելուց հետո թարգմանիչը անհրաժեշտ է համարել քամել մի մծղուկ, – «Մարզպան» բառը, ծայրահեղ ճշտապահությամբ, Général-Inspecteur չի թարգմանել, այլ գրել է ֆրանսիացու համար օտարտտի Marzeban և ներքևում ծանոթագրել այդ խոսքի բառացի նշանակությունը և այն իմաստը, որով նա գործ է դրված նամակի բնագրում:

Վավերագրերի մի շարք այդպիսի կեղծ թարգմանություններ մեջբերելուց հետո «Aspirations»-ի խմբագիրները բացականչում են (էջ 132). «C'est ainsi qu'on se préparait à l'intérieur» («Այսպես էին պատրաստություններ տեսնում ներսում»):

Բերենք «Aspirations»-ի կեղծարարության մի վերջին օրինակ ևս:

308–310 երեսում, ապացուցանելու համար, որ «Կոմիտեների, պատրիարքների և կաթողիկոսների գործունեության միակ նպատակն է եղել փորփորել տաճկա-

կան կայսրության հիմքերը», տաճիկ կառավարությունը հին դարմանը քամուն տալով, մեջ է բերում պատրիարքական փոխանորդ Մատթեոս Եպիսկոպոս Իգմիրյանի 1879 մայիսի 4 թվակիր նամակը Վահան վարդապետ Մինասյանին բավական ճիշտ ֆրանսերեն թարգմանությամբ և հավելվածում տալիս է այդ նամակի շատ պարզ նմանահանությունը (դոկ. № 1):

Այդ նամակի մեջ Իգմիրյանը ապացուցանում է, թե Հայաստանի իրավական բարենորոգումները հնարավոր են միայն այն դեպքում, եթե Հայաստանը ինքնօրինություն ստանա «ընդ հովանյալ Օսմանյան Պետության»:

Իթթիհատի վարձկան թարգմանիչները այդ «ընդ հովանյալ Օսմանյան Պետության» խոսքերը դուրս են գցել շատ հասկանալի նպատակներով:

Անցնենք այժմ նորին գերազանցություն Ահմեդ Ռուստեմ բեյի կեղծիքներին, որ իր գրքի 64 էջում հայտարարում է, թե «Տաճկաստանին վերաբերյալ բոլոր հեղինակավոր գրքերը միաձայն հարգանքով են խոսում տաճիկ ճշմարտասիրության մասին և ողբում այդ առաքինության բացակայությունը նրա քրիստոնյա հայրենակիցների մեջ»:

Բերենք միայն մեկ օրինակ:

Գրքի 164 երեսում տպված է հետևյալ «դոկումենտը» (-13), որի ֆրանսերենը հնարավորություն չունենք տպել վերոհիշյալ տեխնիկական պատճառով, ուստի տալիս ենք նրա հայերեն թարգմանությունը:

Ահա այդ «նամակը»:

«Դաշնակցության նամակը Դամասկոսի ճյուղին (Կոմիտեին)

Պոլիս... 1914

...1914 թվի սեպտեմբերի 21-ին էր, որ Օսմանյան կառավարությունը գորակոչ հայտարարեց: Այդ օրն ևեթ մի արտասովոր գործունեություն նկատվեց Պոլսի Դաշնակցական կոմիտեի կացարանում: Պարագլուխները հավաքվեցին և իրենց գավառական ճյուղերին ծածկագիր հրահանգներ տվին: Նույն տեսակ գործունեություն էր նկատվում նաև Հնչակի, Ռամկավարի և Վերակազմյալի շարքերում: Այդ բոլոր կոմիտեները, որոնք արդեն միացած էին բարենորոգումների հարցի հետևանքով, այդ բոլորին ճիգ էին թափում պահպանելու և գորացնելու այդ միությունը:

Եթե ռուսները առաջ խաղան դեպի սահմանի այս կողմը և օսմանյան գորքերը հետ նահանջեն, պետք է ամեն կողմից բոլորը միաժամանակ ոտքի ելնեն, գործ դնելով իրենց ձեռքի տակ եղած բոլոր միջոցները: Օսմանյան գորաբանակը երկու կրակի արանք կրնկնի: Պետք է պայթեցնել բոլոր պետական շենքերը, գրավել ներսում եղած կառավարական ուժերը և հարձակում գործել պարեն հայթայթող խմբերի վրա: Հակառակ դեպքում, եթե օսմանյան գորքերը առաջ խաղան, հայ զինվորները պիտի լքեն գորամասերը՝ հետները տանելով իրենց զենքերը, պիտի հրոսակախմբեր կազմակերպեն և միանան ռուսների հետ»:

Ահա թե ինչ դիվային դավ էր նյութվում տաճիկ պետության դեմ հայ բոլոր քաղաքական կուսակցությունների և մանավանդ Չ. Յ. Դաշնակցության կողմից, եթե հավատանք «ճշմարտասեր» Ահմեդ Ռուստեմ բեյին:

Բայց իթթիհաստականներին առհասարակ և նորին գերազանցություն Ահմեդ Ռուստեմ բեյին մասնավորապես՝ չի կարելի հավատալ, երբ հարցը վերաբերում է հայերին, մանավանդ Հ. Յ. Դաշնակցության:

Բացեք «Aspirations»-ի 125-րդ երեսը և դուք կգտնեք բառ առ բառ վերևում բերված ամբողջ «Նամակը», բայց ոչ իբր նամակ, այլ սկզբի հատվածը իբրև դատողություն «Aspirations»-ի խմբագիրների, իսկ երկրորդ հատվածը իբրև քաղվածք այն հրահանգներից, որ Հ. Յ. Դաշնակցությունը տալիս է գավառներին:

Ահմեդ Ռուստեմ բեյը միմիայն հետևյալ փոփոխություններն է մտցրել «Aspirations»-ից փոխ առած կտորի մեջ. առաջինը, վրան մակագրել է «Դաշնակցության նամակը իր Դամասկոսի ճյուղին. Պոլիս... 1914», երկրորդ, սկզբի տողում հուլիսի 21-ը դարձրել է սեպտեմբերի 21, և երրորդ, «եթե ռուսները առաջ խաղաղահանդիս» բառերով սկսվող պարբերությունից առաջ դուրս է գցել հետևյալ նախադասությունը՝ «Les instructions transmises aux provinces disaient» («գավառներն ուղարկված հրահանգների մեջ ասված է»):

Որտեղից էն վերցրել «Aspirations»-ի խմբագիրներն այդ «քաղվածքը» Հայ Հեղափոխական Դաշնակցության հրահանգներից – հայտնի չէ. նրանք, չակերտների մեջ դնելով այդքան մի կարևոր փաստաթուղթ, որ մենակ արժե իրենց բերած մյուս բոլոր դոկումենտներին միասին վերցրած, ավելորդ են համարել ոչ միայն նմանահանել, այլև ցույց տալ աղբյուրը և բացատրել, թե ինչպես է իրենց ձեռքն ընկել այդպիսի մի դավադրական հրահանգ:

Այն բոլորից հետո, ինչ որ մենք գիտենք այդ պարոնների կեղծարարային ընդունակությունների մասին, կարող ենք վստահաբար ասել, որ նրանք ուղղակի հորինել են այդ փաստաթուղթը:

Որ այդ «քաղվածքը» շինծու է, երևում է նմանապես նույն «Aspirations»-ում նմանահանված մի դաշնակցական նամակից, որի մասին մենք արդեն առիթ ունեցանք խոսելու («Դ-ի ընկերներին»):

Այդ նամակը սկսվում է հետևյալ տողերով՝ «Ընդհանուր պատերազմին հետևանքներ, իհարկե, ծանրացան նաև Թուրքիայի վզին. աստոր հետևանքն են ընդհանուր զորակոչման հրամանները: Եվրոպական բոլոր ազգերը իրար են անցնում, և կարող է պատահել, որ Թուրքիան էլ հանդարտ չմնա ընդհանուր պատերազմի մեջ և մաս ունենա, նամանավանդ որ այստեղ կան բարի մարդիկ, որոնք այդ ուղղությամբ չեն խնայում իրենց աշխատանքները»: Այնուհետև գալիս է «Վահաբը Ռուսաստանի վրայով» բառերով սկսվող անկարգալի պարբերությունը, որից հետո, ինչպես ասացինք իր ժամանակին, խոշորացույցով կարելի է ջոկել հետևյալ պարբերությունը՝ «Երկրի ներկա տագնապալից հանգամանքներում անհրաժեշտ է, որ թուրքը, հայը, քուրդը լինեն համերաշխ, որովհետև ընդհանուր շահը այդ է պահանջում»:

Ահա թե ինչ էր գրում Հ. Յ. Դաշնակցությունը «Դ-ի (երևի, Դամասկոսի) ընկերներին» զորակոչը հայտարարելուց հետո, և ինչ են վերագրում նրան «Aspirations»-ի խմբագիրները և Ահմեդ Ռուստեմ բեյը, որ «Aspirations»-ի կեղծիքը քառակուսի աս-

տիճանի է հասցրել, արդարացնելով այն ասացվածքը, թե «գողը գողից գողացավ, Աստված վերից զարմացավ»:

Հ. Գ.– «Aspirations»-ի այն օրինակում, որ մեր ձեռքի տակին է, պակաս են 177–192 էջերը: Եթե Թիֆլիսում որևէ մեկը ունի այդ գրքից, խնդրում եմ գոնե մի օրով իմ տրամադրության տակ դնի իր օրինակը:

«Հատաջ», 9. II. 1919:

II

Ս Ո Ւ Տ Ե Ր

Եթե «ձու գողացողը ձի էլ կգողանա», ձի գողացողը՝ ձու կգողանա ու կգողանա: Զարմանալի կլիներ, եթե կեղծարարը սուտ չասի:

Եվ հիշավի՛ թե «Aspirations»-ը, թե «La guerre mondiale»-ը լիքն են սուտերով, – սուտ վկայություններով, սուտ փաստերով, սուտ դատողություններով:

Սուտ վկայություններ

Սկսենք վկաներից, որոնք ձգնում են ապացուցանել, թե հայի հորթը ընդունակ է ուտել տաճկի ու քրդի գամփոին:

Ինչպես ասացինք, այդ գրքերում բերված բոլոր ցուցմունքները մուսուլման վկաների, հետևաբար շահագրգռված անձնավորությունների ցուցմունքներ են:

Սակայն այդ գրքերի հեղինակները շեշտում են, որ այդ վկաները երդումով են տվել իրենց ցուցմունքները, հետևաբար պիտի հավաստի համարվեն: Չէ՞ որ ճշմարտախոսությունը, ըստ Ռուստեմ բեյի, Տաճկաստանում միմիայն մուսուլմանների և գլխավորապես տաճիկների առանձնահատկությունն է: Ինչպես կարող են ստել իրենց ճշմարտախոսությամբ հոշակված մարդիկ, այն էլ երդում ուտելուց հետո:

Սակայն՝ որ ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական վկաներն էլ կարող են սուտ երդում ուտել, – շատ լավ հայտնի է անդրկովկասյան բոլոր դատական գործիչներին: Հաստատված փաստ է, որ մահմեդական ազգաբնակչության մեջ էլ նույնիսկ ամենակրոնամոլ անձնավորություններին չի զսպում երդումը, երբ նրանք ուզում են սուտ վկայություններ տալ: Մեր դատարաններում հազվագյուտ չէին, օրինակ, այսպիսի երևույթներ. – դիցուք մի Հասան Մահմեդ օղլի, պնդում է դատարանում՝ թե այսինչ հողաբաժինը իր հայրական, պապական սեփականությունն է և բերում է մի շարք ծերունի թուրք դրացիներ, որոնք բոլորն էլ երդումով վկայում են՝ թե ինչ իրենք աչք են բաց արել՝ Հասան Մահմեդ օղլուն այդ հողի վրա են տեսել: Եվ սուտ չեն ասում, որովհետև նախքան դատարան գալը՝ զնացած են եղել վիճելի հողաբաժինը, աչքները փակել են և երբ բացել են՝ Հասան Մահմեդ օղլին այնտեղ է եղել:

Ինչպես տեսնում եք, մուսուլմանների մեջ էլ դեռ գործածական է ճիզվիտների «մտացի վերապահություն» (reservatie mentalis) կոչված սկզբունքը: Ուրեմն, համե-

նայն դեպս, ոչ մի հիմք չկա ավելի նշանակություն տալու մահմեդականների երդումին՝ քան քրիստոնյաների երդումին:

Անցնենք այժմ փաստերին:

Վերցնենք օրինակ, վանեցի կոշկարար Հալիլ աղայի երդումավոր ցուցմունքը («Aspirations», էջ 395):

«Վանի պարպումից (Էվակուացիայից) հետո՝ հայերը մեզ տարան ամերիկացիների հիմնարկությունը: Ամբողջ ազգաբնակչությունը այնտեղ էր հավաքված (խոսքը, իհարկե, տաճիկ ազգաբնակչության մասին է. – Տ. Ն.): Մենք այնտեղ մնացինք երկու ամիս, որոնց ընթացքում մեզ տալիս էին օրեկան մի-մի հաց: Այդ հացից ուտողների մազերը սկսում էին թափվել, արյունը թունավորվում էր և դրանից մեռնում էին: Շատերը մահացան այդպես կարճ ժամանակում և մեզնից ողջ մնացինք միայն մի հարյուր հոգի: Այնուհետև այնտեղից մեզ փոխադրեցին ֆրանսիական հյուպատոսարանը, ուր մեզ փակած էին պահում: Այն սարսափները, որոնց հայերը ենթարկեցին մեր կանանց, գերազանցում են այն ամենը, ինչ որ կարելի է երևակայել: Մահմեդական թաղերը կարճ ժամանակում ավերվեցին: Զվարճանքի համար Սեհակ բեյի տան մոտ սպանեցին Հաջի աղա Չեբեջի օղլուն, ինչպես նաև հարկահավաք Հաջի էֆենդու երեք երեխաներին ու կնոջը, որոնք ապաստանել էին Չեբեջիի մոտ: Գալով գյուղերի բնակիչներին՝ նրանց գրեթե երկու երրորդականը թափվեցին Մերմիդ գետը»:

Ահա ձեզ և երդումով հաստատված վկայություն: Եթե հավատանք կոշկարար Հալիլ աղային, ամերիկացի միսիոներները, որոնց անձնվեր մարդասիրական գործունեությունը համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում վեր է ամեն կասկածից ու գովասանքից, սիստեմատիկաբար թունավորելի ու են եղել իրենց խնամքին հանձնված անզեն, անպաշտպան մարդկային էակներին:

Ինքնըստինքյան ակներև է այդ ցուցմունքի մեջ պարունակված և այն մեղադրանքի ստությունը, որ ուղղված է հայերի դեմ: Եթե հայերը պիտի աներևակայելի սարսափների ենթարկեին տաճիկ կանանց, ի՞նչն էր ստիպում նրանց, որ տանեին այդ տաճիկներին ու պահ տային ամերիկացի միսիոներներին: Վերջապես, ինչպե՞ս կարող էին այդ միսիոներները թույլ տալ, որ իրենց հարկի տակ հայերը բռնաբարեին իրենց հովանավորության ներքո գտնվող կանանց:

Բարեբախտաբար, Վանի «պարպման» կամ ավելի ճիշտ ասած՝ ազատման օրերին, բացի հայերից ու տաճիկներից, այնտեղ եղել են նաև չեզոք անձնավորություններ:

Տեսնենք՝ ի՞նչ են պատմում նրանք:

Վերցնենք Լորդ Բրայսի գրքում տպված մի նամակ, որ գրել է Վանից 1915 թ. մայիսի 24-ին մի ամերիկուհի օրիորդ, Կնապպ անունով (վավերագիր № 15) անգլիական բնագրում և № 9 ֆրանսիական կրճատ թարգմանության մեջ:

«Չորեքշաբթի, մայիսի 19-ին, – գրում է օրիորդ Կնապպը, – ռուսներն ու ռուս-հայկական կամավորները մտան քաղաքը: Նրանց մոտենալն էր ստիպել տաճիկներին փախչել... Արամը նշանակվեց ժամանակավոր նահանգապետ, և դարերից ի վեր առաջին անգամ հայերը դեպք ունեցան ինքնակառավարվելու: Գործերը

վերսկսվեցին: Բնակիչները սկսեցին վերաշինել իրենց հրկիզված տներն ու խանութները: Մենք վերաբացինք միսիայի դպրոցները, բացի պարսպապատ քաղաքամասի դպրոցից, որի շենքը այրվել էր: Տաճիկները ամբողջովին չէին փախել քաղաքից: Մնացել էին որոշ թվով ծերուկներ, պառավներ ու երեխաներ, որոնցից շատերը թաքնված էին: Հայ զինվորները, որոնք տաճիկների նման չէին, պատերազմ չէին մղում այդպիսի արարածների դեմ»:

Այնուհետև օրիորդ Կնապպը հաղորդում է, թե հայերը այդ անպաշտպան տաճիկներին տեղավորեցին ամերիկական միսիոներների մոտ, «միակ տեղը, ուր նրանք կարող էին ապահով լինել խուժանից» և պատմում է, թե որքան դժվար էր կերակրել այդ պատսպարյալներին, թե ինչպես միսիայի անդամները լողացնում էին այդ թշվառներին, մաքուր անկողիններ պատրաստում նրանց համար, կաթ խմացնում հիվանդներին ու երեխաներին և վերջապես պաշտպանում կոզակներից, որոնք գրեթե ամեն գիշեր փորձեր էին անում առևանգելու տաճիկ կանանց, որոնք «իրենց օրինական ռազմավարն էին համարում» (օրիորդի ասելով, կոզակներն այդպիսի փորձեր էին անում առաջին երկու-երեք շաբաթը, թեև ռուս զեներալը մի փոքրիկ պահակախումբ էր դրել ամերիկական հիմնարկությունը պաշտպանելու համար):

Բնչ խոսք, որ ամերիկական հիմնարկության շրջապարիսպի վրայով գիշերները գաղտագողի ներս սողոսկող կոզակներին չէր կարող հաջողել «աներևակայելի սարսափների ենթարկել» հատուկ պահակախմբի պաշտպանության և ամերիկացի միսիոներների աչալուրջ հսկողության տակ գտնվող տաճիկ կանանց, բայց եթե նույնիսկ ճիշտ համարենք այդ «սարսափների» փաստը, անկասկած է այն, որ Հալիլ ադան ստում է՝ հայերին վերագրելով այդ «սարսափները», որովհետև տաճիկները շատ լավ էին տարբերում կոզակին հայից:

Պարզ է, որ այս դեպքում էլ, ինչպես Մամախաթունի «հայերի ձեռքով եկեղեցի դարձրած մզկիթի» դեպքում կամ հնարված է փաստն ամբողջովին, և կամ, լավագույն դեպքում, ռուսների արածը դիտմամբ հայերին է վերագրված:

Նույն «Aspirations»-ի նույն բաժնում («Հայոց գործած վայրագությունները») տպված է Վանի ժամդարմապետ Ալիի զեկուցագիրը իր կատարած քննության մասին, որի ժամանակ տաճիկ վկաները երդումով հաստատել են, թե Վանի ազատումից հետո հայերը քաղաքի զանազան թաղերում կոտորել են մոտ հազար տաճիկ կին ու երեխա (մի բան, որ եթե ճիշտ լիներ՝ չէր կարող անհայտ մնալ հազարավոր տաճիկ պատսպարյալների խնամող օրիորդ Կնապպից) և մասնավորապես «Մալեհ զինվորի կնոջը, իր չորս հատ 5-ից մինչև 15 տարեկան երեխաներին և իր եղբոր ու քրոջ ընտանիքի անդամներին կտոր-կտոր են արել, բառի բուն նշանակությամբ փրթել են հայ հրոսակները, որոնք իրենց խաչերը ներկել են նրանց արյունով» (էջ 391):

Բնչպես հայտնի է, իրենց մարմնի վրա խաչ կրում են ռուսները և ոչ թե հայերը, բայց որ գլխավորն է չկա մի հավատացյալ քրիստոնյա, որ սրբապղծություն չհամարի ներկել խաչը արյունով, այն էլ մուսուլմանի արյունով:

Տաճիկ ջարդարար պիտի լինել այդպիսի անհեթեթ վկայություն տալու համար, տաճիկ ժանդարմապետ՝ այդպիսի վկայություններ զեկուցագրի մեջ զետեղելու համար և տաճիկ կառավարության վարձկան գրչակ՝ այդպիսի «երդումավոր ցուցմունքներով» վայրագության մեղքը տաճիկ ու քուրդ ավագակի ցավոտ գլխից հայ առողջ գլխին փաթաթելու համար:

Վանին վերաբերյալ երկու ցուցմունք էլ Ռուստեմ բեյի գրքից վերցնենք:

Ահա թե ինչ երդումավոր վկայություն է տալիս Վանի ոստիկան Սուլեյման էֆենդի Մաադուլահ օղլին (էջ 181, վավերագիր № 7)։

«Քաղաքը թշնամու ձեռքն ընկնելուց հետո՝ հայերը կրկնապատկեցին իրենց վայրագությունը: Նրանք հետապնդում էին փախստականներին ու կոտորում փողոցներում: Քաղաքներում մնացած հարյուրավոր մուսուլման տղամարդիկ, կանայք ու երեխաներ տանջանքների ենթարկվեցին և մորթոսվեցին այդ հայ հրոսախմբերի ձեռքով»:

Ինչպես տեսանք, որ ոչ միայն ամերիկուհի Կնապպը, այլև հայերին զրպարտորեն տաճկուհիների բռնաբարումն վերագրող տաճիկ Հալիլ աղան հաստատում են, որ հայերը «Վանը թշնամու ձեռքին ընկնելու» օրը ոչ միայն փողոցներում կոտորած չսարքեցին, այլև հավաքեցին քաղաքում մնացած բոլոր տաճիկներին և ամերիկացի միսիոներների պաշտպանությանը հանձնեցին:

Ահա և երդումավոր ցուցմունք մի անձնավորության, որ տաճկական միջավայրից դուրս արժանահավատ վկաների թիվը պիտի գրավեր իր հասարակական դիրքի շնորհիվ:

Ռուստեմ բեյի գրքի 194 էջում կարդում ենք Վանի ժողովրդական լուսավորության տեսուչ Շերիֆ բեյի՝ «Վանի կոտորածից հրաշքով ազատված» այդ տաճիկ մտավորականի վկայության հետևյալ հատվածը. «Քաղաքը ռուսների ձեռքումն եղած ժամանակ, մուսուլման ազգաբնակչության բաժանում էին թունավորված հաց, որ սարսափելի մահացություն էր պատճառում»:

Եթե կոշկակար Հալիլ օղլուն մի կերպ կարելի էր ներել այն բանը, որ նա, մոռանալով ամերիկացիների երախտիքը, տաճիկ փախստականների մեջ տարածված փորհարիները (դիզենտերիա) վերագրում է ամերիկացիների ձեռքով թունավորված հացին, բոլորովին անհնար է ենթադրել, թե Շերիֆ բեյի կողմից կարող էր տեղի ունենալ որևէ սխալանք: Ժողովրդական լուսավորության մի տեսուչ, թեկուզ տաճիկ տեսուչ, անշուշտ, կիմանար, թե ինչից է առաջանում ու տարածվում փորհարիները, և համենայն դեպս չէր կարող խառնել ռուսներին ամերիկացիների հետ (չէ՞ որ Վանում մնացած բոլոր տաճիկներին հայերը տեղավորել էին ամերիկացի միսիոներների մոտ և այդ միսիոներներն էին նրանց կերակրում. էլ ինչպե՞ս կարող էին ռուսները թունավորված հաց բաժանել Վանի տաճիկ ազգաբնակչության):

Վանից անցնենք Էրզրումի վիլայեթը և թերթենք դատական պաշտոնյա Շուքրիի համայնապետ Քեմալի այն զեկուցումները, որի մասին առիթ ունեցանք խոսելու տաճկական դատը փաստաբանող գրքերի կեղծիքները հավաստելիս:

1916 թվի մայիսին տված երդումավոր ցուցմունքներում տաճիկ վկաները պատմել են այդ «քննիչներին» թե հայերը մի շարք գազանություններ են գործել Էրզրում:

մի վիլայեթի Յոք-Թաշ գյուղում և թե այդ հայերի թվում նրանք տեսել են Անդրանիկ փաշային, որին իրենք անձամբ ճանաչում են («Aspirations», էջ 378):

Նույն զեկուցագրին նայելով, հայերը վայրագություններ են կատարել 1916 թ. մայիսից առաջ նաև Էրզրումի վիլայեթի Ալիթիկ գյուղում, որի բնակիչները նույնպես հավաստում են, թե այդ հայերի պարագլուխը Անդրանիկ փաշան էր (նույն գրիքը, էջ 379):

Վերջապես, նույն «Aspirations»-ի 363 էջում գրքի հեղինակները հավատացնում են, թե 1915 թ. հունիսին՝ Կարս-Հիսսարի ապստամբության պարագլուխը եղել է Անդրանիկը, որ հրացանագարկ է անել սովել միջնաբերդում պատսպարված այն հայ ապստամբներին, որոնք առաջարկել են անձնատուր լինել:

Արդ՝ ամենքին հայտնի է, որ 1915, ոչ էլ 1916 թվին Անդրանիկը ոչ մի րոպե Էրզրումի կողմերում չի եղել, այլ այդ ժամանակամիջոցում շարունակ գտնվել է հարավային ճակատում:

Կարելի է աներկյուղ գրագ գալ, պնդելով, որ եթե վաղը որևէ տաճիկ կամ թուրք թերթում մի մուսուլման պրովակատոր հաղորդի, թե լուսնի վրա հայ հրոսակախմբերը տաճիկ կանանց բռնաբարել են, անգեն տղամարդկանց՝ ձիու նման պայտել են և երեխաներին խորովել ու կերել՝ մյուս օրը դուրս կգան տասնյակ վարձկան վկաներ, որոնք երդումով կհաստատեն, որ այդ բոլորը կատարվել է իրենց աչքի առջև «Անդրանիկ փաշա մականված Ալեքսան օղլի Անդրանիկի» հրամանով, որին իրենք մանկությունից ի վեր ճանաչում են:

Տաճիկ կառավարության ծառաներին ու գործակալների ստերդում վկայության մի վերջին օրինակ էլ բերենք:

Վերցնենք մշեցի Մեհմեդ Ռեսուլի ցուցմունքը («La guerre mondiale», էջ 181):

Այդ մշեցին ուզում է հավատացնել. նախ՝ թե իր մի ընկերոջ մարմնի ամբողջ կեսի կաշին հայերը քերթել են, հետո նրան ենթարկել են ուրիշ դաժան տանջանքների և ի վերջո սպանել են, և ապա՝ թե նույն հայերը իրենց սվինները 24 անգամ (ոչ ավել, ոչ պակաս) շիկացրել են կրակի վրա և նրանցով դաղել իր (վկայի) մարմինը, և ինքը այդ տանջանքին ենթարկվելուց հետո ոտքով, առանց ուրիշի օգնության, ճանապարհ է գնացել այդ հայերի և կոզակների հետ (որոնց մեջ իբր թե մի դապանցի թաթար է եղել) և նույն գիշերը փախել է և հազար ու մի վտանգների ենթարկվելուց հետո, հարել է տաճիկ փախստականների մի խմբի ու ճանապարհը շարունակել:

Ամեն մի լուրջ բժիշկ ձեզ կասի, որ այդ փաստերը անհավանական են: Մարմնի կաշվի կեսից զրկված մարդը, եթե իսկույն չմեռներ, անշուշտ, կմեռներ այնուհետև մյուս դաժան տանջանքներից և նրան սպանելու կարիք չէր լինիլ:

Ինչ վերաբերում է վկային, իհարկե 24 շիկացած սվիններից դաղված մարմնով նա չէր կարող այդքան քայլել և նույնիսկ հաջողությամբ փախուստ կատարել: Վերջապես փորձված քննիչ կամ նուրբ հոգեբան չպիտի լինել հասկանալու համար, որ այդպիսի բարբարոս տանջանքի ենթարկված մարդը՝ պատմության հետագա մասերում գոնե մի տեղ գեթ մի փոքր ակնարկ կաներ իր զգացած սարսափելի ցավերի և իր քայլելու և մանավանդ փախչելու դժվարության մասին:

Ո՛չ, արժանահավատ վկաների ցուցմունքներ չեն այդ, այլ Մյուլհասուդենի (Մյունհաուզեն.– Ան. Չ.) հայտնի հեքիաթների շարունակություն:

«Հատաջ», 19. II. 1919:

III

Մ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն Ն Ե Ր

«Aspirations»-ի և «La guerre mondiale»-ի հեղինակները ստախտության մեջ հետ չեն մնում իրենց օգտագործած վկաներից, ուստի եթե կամենայինք մի առ մի մատնանշել նրանց բոլոր սուտերը, պիտի նրանց գրքերի ծավալով երկու գիրք էլ մենք գրեինք:

Բավականանանք մի քանի նմուշներ բերելով:

Սկսենք Ահմեդ Ռուստեմ բեյից:

«Որ քրիստոնյաները երբեմն ենթարկվել են հալածանքի Տաճկաստանում, այդ անհերքելի է,– ասում է Ռուստեմ բեյը,– բայց այդ հալածանքները երբեք չեն հասել սարսափների այն աստիճանին, որին հասել են Եվրոպայում տեղի ունեցած «ինկվիզիցիաները», «Բարդուղիմեոսյան գիշերները» և «պոգրոմները»: Մի ուրիշ տարբերություն էլ կա: Տաճկաստանում հանուն իսլամիզմի կատարած խժոժությունների հեղինակները եղել են ամբոխը կամ իրենց անձնական պատասխանատվությամբ գործող անհատներ՝ մոլեռանդության թերևս հաճախակի, բայց միշտ պատահական գերագրգռման ազդեցության ներքո, և երբեք սուլթանները կամ Բարձրագույն Դուռը պատասխանատու չեն եղել այդ խժոժությունների համար, այլապես, քան այն պատճառով, որ միջոցներ գործ չեն դրել նախօրոք նրանց առաջն առնելու կամ դանդաղորեն են շարժվել նրանց զսպելիս: Մինչդեռ Արևմուտքում կրոնամոլ կրքերի գրգռումները պաշտոնապես ծրագրված սիստեմի մի մասն են կազմել և այն սառնասրտորեն ու վճռականորեն ընտրված նպատակն են ունեցել, որ բռնի կրոնափոխ դարձնեն կամ բնաջնջեն բողոքականներին կամ կաթոլիկներին, նախած թե նրանցից որոնք էին պատկանում պետական կրոնին» (էջ 7):

Շատ բնորոշ է, իհարկե, որ տաճիկ կառավարության փաստաբանը իր կլիենտին արդարացնելու համար ստիպված է ինկվիզիցիայի և Բարդուղիմեոսյան գիշերի հին դարմանը քամուն տալ, կարծեք թե, իր հակառակորդների ասածն էլ հենց այն չէ, թե տաճկական ռեժիմը մի անախրոնիզմ է և տաճիկ վարիչ շրջանների մտայնությունն ու բարքերը միջնադարյան խավար ու գազանաբարո ժամանակներն են հիշեցնում:

Ինչ վերաբերում է Ռուստեմ բեյի ակնարկած հրեական «պոգրոմներին», որոնք, անշուշտ, ռուսաց հին ռեժիմի ամենախայտառակ արտահայտությունը պիտի համարվեն, ի՛նչ համեմատություն կարող է լինել նրանց և տաճկական գազանությունների մեջ: Ամենքին հայտնի է, որ «պոգրոմների» ժամանակ մարդկային զոհեր շատ քիչ էին լինում, իսկ բռնաբարության և գազանային սպանության դեպքեր գրեթե երբեք, և «պոգրոմի» ենթարկված տների պատուհաններից փողոց էին նետ-

վում ոչ թե որք երեխաներ, ինչպես, օրինակ Բաքվում անցյալ տարվա սեպտեմբերին, այլ բարձեր ու ներքնակներ:

Իսկ թե սարսափների ի նչ աստիճանի կարող են հասնել տաճկական գազանությունները, դրա մասին կխոսենք հետո, երբ ամփոփ կերպով կուրվագծենք այն աղետների պատկերը, որ կրեցին ռուսահայերը տաճիկների վերջին արշավանքի ընթացքում: Առայժմ կբավականանանք բերելով մի քանի օտարազգի վկաների ցուցմունքներ այն գազանությունների մասին, որոնց ենթարկվեցին Ադանայի հայերը սրանից տաս տարի առաջ:

«Տաճիկները մարդկանց կիսասպան էին անում և, թողնելով, որ թշվառները լողան իրենց արյան մեջ, նրանց կանանց բռնաբարում էին իրենց աչքի առջև» (տիկին Doughty-Wylie, անգլուհի):

«Դահիճները գնտախաղ էին անում նոր կտրած գլուխներով և ծնողների աչքի առջև փոքր երեխաներին օդն էին նետում և իրենց դաշույնների ծայրը դեմ անելով՝ բռնում» (հայր Բենուա, ֆրանսիացի):

«Տանջանքները փոխեփոխ բիրտ են կամ հմտորեն նրբացրած: Զոհերից ոմանց ենթարկում են մի շարք վարպետորեն կիրառված տանջանքների, որոնց նպատակն է երկարացնել նահատակի կյանքը, որպեսզի ավելի տևողական լինի դահիճների խրախուսանքը. նրանց մարմնամասերը կտրատում ու խեղում են դանդաղորեն, մեթոդիկաբար. պոկում են եղունգները, ջարդում են մատները, հրաշեկ երկաթներով դաջում են մարմինները, այնուհետև քերթում են գլուխների կաշին և, ի վերջո, լափ են դարձնում ու նետում շների առաջ: Ոմանք էլ՝ ոսկորները մաս առ մաս փշրելուց հետո՝ ի խաչ են հանում կամ կերոնների նման վառում: Մահապարտների շուրջը կիտվում են խմբեր, որոնք զվարճանում են այդ տեսարաններով և ծափահարում նահատակների ամեն մի շարժումին» (Ա. Ադոսսիդես, հույն, «Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie»):

Ճիշտ են ասել, թե սուտասանի հիշողությունը կարճ կլինի: Իր ասածի մի մասն էլ հենց ինքը Ռուստեմ բեյն է հերքում մի քանի էջ հետո:

Սուլթանները և Բարձրագույն Դուռը երբեք ներգործական մասնակցություն չեն ունեցել այն հալածանքների մեջ, որոնց քրիստոնյաները ենթարկվել են Տաճկաստանում, այնպես է Ռուստեմ բեյը իր գրքի 7 էջում: Եվ ահա միևնույն գրքի 23 էջում սև տառերով սպիտակ թղթի վրա տպված են հետևյալ խոսքերը՝ «Զայրացած կոմիտեների հանդգնությունից, որոնք վիրավորում էին նրա բռնակալական ինքնասիրությունը, և ուզելով մի անգամ ընդմիջտ վերջ տալ նրանց դավերին, Աբդուլ-Համիդը վճռեց նրանց պրոպոկացիաներին պատասխանել հայ արյուն հոսեցնելով և այդ՝ այնպիսի չափերով, որ հայերը ահաբեկվեին և համոզվեին, թե ինչքան էլ ինքը հեռու գնար այդ ճանապարհով, պառակտված Եվրոպան միմիայն պլատոնիկաբար պիտի միջամտեր»:

Իբրև ժողովրդական կրքերի պոռթկման օրինակ՝ Ռուստեմ բեյն առաջ է բերում Ադանայի կոտորածը, որ նա, իհարկե, կոտորած չի անվանում, այլ «conflict» (ընդհարում, կռիվ):

Եթե հավատանք այդ «ճշմարտասեր» պարոնին, Ադանայի և շրջակայքի հայերը, որոնք «բավական բազմաթիվ են այդ կողմերում և ունենին վիթխարի քանակությամբ զենքեր», վաղուց ի վեր պատրաստվում էին ապստամբել (որ ամբողջ Տաճկահայաստանի ապստամբության ազդանշան պիտի ծառայեր և օտար միջամտության առիթ պիտի տար), ամեն քայլափոխում վիրավորանքներ էին հասցնում մուսուլմաններին ու սպառնալիքներ ուղղում նրանց և այնտեղ էին հասցրել իրենց հանդգնությունը, որ «մուսուլմանների տների վրա խաչի նշաններ էին դրել, կարծես թե նախօրոք ազդարարելով քրիստոնյաների հաղթանակը» (էջ 31): Տաճիկ ազգաբնակչությունը, իհարկե, չէր կարող անվերջ հանդուրժել այդպիսի գործելակերպ:

«Այս անգամ մուսուլման ազգաբնակչությունը պատասխանեց հայերի պրովոկացիային: Տաճիկները վերջապես սթափվեցին այն թմրությունից, որ տիրել էր նրանց՝ երեսուն և երեք տարի տևող բռնակալության հետևանքով»: Ճիշտ է, շարունակում է նա, իրենց վրեժխնդրության մեջ տաճիկները տեղ-տեղ ծայրահեղությունների հասան, շատ հաճախ խառնելով չկոմունիստ կոմունիստ, անմեղին մեղավորի հետ, բայց այդ ներելի է, որովհետև հայերը իրենց հանցավոր նպատակներին հասնելու համար ուզում էին Տաճկաստանի դիակի վրայով անցնել և դաշույն էին խրում նրա թիկունքը: «Էական տարբերություն կա, – ասում է Ռուստեմ բեյր ծանոթության մեջ, – 1895–96 թվերի դեպքերի և Ադանայի ողբերգության միջև: Արդուլ-Համիդը սառնասրտորեն ծրագրել էր իր անելիքը և նրա ծրագրին զոհ դարձան անպաշտպան հայերը: Բսկ Կիլիկիայի մուսուլմանների կողմից տեղի ունեցավ անմիջական և ուղղակի հակազործություն իրենց չափ լավ զինված հայերի պրովոկացիային: Այնտեղ, արդարև, կոտորած տեղի ունեցավ, իսկ այստեղ մի պայքար, մի ճակատամարտ երկու տարրերի մեջ: Այդ պայքարի ընթացքում կատարված խժդժություններն էլ երկուստեք էին» (էջ 33):

«Հառաջ», 6. III. 1919:

Մ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն Ն Ե Ր

Իր ասածն ապացուցանելու համար Ռուստեմ բեյր մեջ է բերում մի հեղինակավոր վկայություն, «Ադանայի այն ժամանակվա անգլիական ընդհանուր հյուպատոս Doughty–Wylie-ի զեկուցագիրը, որի մեջ Կիլիկիայում տեղի ունեցած ողբերգական դեպքերը նա վերագրում է հայերի բռնած ամբարտավանորեն պրովոկատորական դիրքին, իսկ տեղական իշխանությունը միմիայն այն բանի համար է մեղադրում, որ նա չի միջամտել manu militaru (զինված ուժերով), որպեսզի կասեցնեք այն հաստիվածը, որ նրանք (այսինքն հայերը) բացարձակ նախապատրաստում էին»:

Ծանոթության մեջ Ռուստեմ բեյր բացատրում է. «Մայր Doughty–Wylie-ն անձամբ իր ձեռքով այդ զեկուցագրի երկու պատճեն հանձնել էր Բարձրագույն Դռան

կողմից Ադանա ուղարկված քննիչ Հանձնաժողովին և այդ պատճենները գտնվում էին տաճիկ իշխանության ձեռքին: Նրանցից մեկը, որի մի թերթը, որ վերջին աստիճանի վարկաբեկիչ էր հայերի համար, պոկել էր հայերից մեկը, այրվեց Չրադանի պալատի հրդեհի ժամանակ: Մյուսը, որով փոխարինվել էր առաջին պատճենը, նույնպես անհետացավ՝ հայտնի չէ թե ինչպես: Որքան զիտենք, այդ զեկուցագիրը բրիտանական կառավարությունը չի հրատարակել, մինչդեռ նա շտապել է լույս ընծայել հայկական հարցին վերաբերող Կապույտ գրքերում իր գործակալների այն բոլոր զեկուցագրերը, որոնք աննպաստ էին Տաճկաստանին: Ինչո՞վ բացատրել այդ ձեռնպահությունը»:

Ի մեծ դժբախտություն Ահմեդ Ռուստեմ բեյի՝ այդ զեկուցագիրը հրատարակվել է և նրանից քաղվածքներ է արել պ. Ադոսսիդեսը իր վերոհիշյալ գրքում, որ լույս է տեսել պ. Ռուստեմ բեյի գրքից ութ տարի առաջ (երևի հենց այդ զեկուցագրից է քաղել պ. Ադոսսիդեսը նաև հյուպատոսի կնոջ, տիկին Doughy–Wylie–ի այն խոսքերը տաճկական գազանությունների մասին, որ մենք մեջբերեցինք մի քիչ առաջ):

«Փետրվար ամսից ի վեր,– գրում է պ. Ադոսսիդեսը,– տազնապալի շշուկներ էին պտտում, նույնիսկ երեխաների բերնից կարելի էր լսել այդ շշուկները: Օրինակ, ամերիկական միսիայի դպրոցները հաճախող տաճիկ աղջիկները բացարձակ պատմում էին, թե «իրենց տնեցիք ասում են, որ շուտով բոլոր հայերին պիտի կոտորեն»*: Մարտ ամսին մուսուլմանների տրամադրությունը վերին աստիճանի թշնամական դարձավ. նրանք սպառնալից ճառեր էին արտասանում: Քննիչ հանձնաժողովը հետագայում այն եզրակացությանն եկավ, թե մուսուլմանները համոզված էին, թե հայերը դավ էին նյութում: Մերսինի անգլիական հյուպատոսը, պ. Doughy–Wylie–ն, գրում է իր զեկուցագրում. «Ինձ թվում է, թե տաճիկների ահագին մեծամասնություն հիրավի կարծում էր, թե վտանգ է սպառնում իրենց երկրին, կյանքին ու կրոնին: Նրանք այն աստիճան տգետ էին, որ դժվար կարող էին հասկանալ, թե այդ բանը անհավանական է... Կոտորածը սկսվեց միննույն օրը և գրեթե միննույն ժամին իրարից շատ հեռավոր վայրերում: Ադանայում տեղի ունեցած մի պրովոկացիա չէր կարող այդպիսի հետևանք ունենալ, ուստի ես տրամադիր եմ կարծելու, թե իշխանության ներկայացուցիչների մի մասը նախօրոք տեղեկություն ուներ ծրագրված կոտորածի մասին:

«Ուրբաթ ապրիլի 16–ին (կոտորածի երրորդ օրը),– գրում է պ. Ադոսսիդեսը,– պ. Doughy–Wylie–ն Ջևադ բեյին (վալիին) նամակ է գրում, որով պահանջում է դադարեցնել ջարդը: Նա ավելացնում է, որ վալին և գորահրամանատար Ռեմզի փաշան իրենց գլխով կպատասխանեն, եթե այդ պահանջը չկատարվի: Այդ սպառնալիքն էր պատճառը, թե՞ զուցե տաճիկները հոգնել էին ու կշտացել, այսպես թե այնպես կեսօրից հետո կոտորածին վերջ տվին» (էջ 48):

Մի քաղվածք էլ բերենք պ. Doughy–Wylie–ի զեկուցագրից. «Ես չեմ հավատում, իբր թե հայերը ձգտում են հեղափոխություն առաջացնել և օտար միջամտության շնորհիվ անկախ պետություն ստեղծել: Եթե հայերը այդպիսի նպատակ ունենա-

* Տես միսիոներուհի օրհորդ Է. Ռեբբի զեկուցագիրը:

յին, նրանք մեծ թվով կքաշվեին սարերը, ուր ավելի լավ կկարողանային պաշտպանվել: Նրանք դաշտերում ցիրուցան չէին թողնիլ մի քանի հազար անգեն հնձվորներ, որոնցից շատերը աղանացիների հայրերն ու եղբայրներն էին: Բացի այդ, ծիծաղելի է կարծել, թե նույնիսկ զինված հայերը, որոնց միակ գենքը ռնովներն էին ու որսորդական հրացանները, կարող էին հույս ունենալ օսմանյան գորքին դիմադրելու»:

Բնչպես տեսնում ենք, Ադանայի հյուսպատոսը պ. Ռուստեմ բեյի ասածի ճիշտ հակառակն է ապացուցանում, բայց այդպես է միշտ սուտ խոսողների ճակատագիրը և իզուր չէ ասված, թե «сама себя раба бьет, коли нечисто жнет»:

Բայց միմիայն օտարագրիները չեն, որ ապացուցանում են պ. Ռուստեմ բեյի ասածի ստությունը: Բարեբախտաբար, տաճիկների մեջ էլ կան հիբրավի ճշմարտախոս մարդիկ, և ահա թե ինչ են ասում նրանք Ադանայի «ընդհարման» մասին:

Կարդացեք Շերիֆ փաշայի նամակը, որ տպված է «Journal de Genève»-ի 1916 թ. համարներից մեկում և արտատպված է «Aspirations»-ի 328-330 էջերում, և կտեսնեք, որ այդ տաճիկ փաշան և՛ 1915 թվի և՛ Ադանայի կոտորածների մեղքը բացարձակորեն զգում է տաճիկների վրա:

Վերջապես ահա ինչ էր գրում մի ազնիվ տաճկուհի, տիկին Քալիդե Մալիհ՝ երիտասարդ տաճիկների «Թանին» թերթում. «Ձեզ եմ դիմում, հայեր: Հանուն ձեր ցեղի, որ նվիրագործեց ազատությունը, ես ներողություն եմ խնդրում ձեզնից, ջախջախված՝ կսկիծի և ամոթի ծանրության տակ այն անլուր դժբախտությունների պատճառով, որոնց ենթարկվեցիք դուք: Հանուն իմ ցեղի, ես պահանջ եմ զգում ձեզնից լավ այն մեծ ու փոքր հայերի գերեզմանի վրա, որոնք ընկան իբրև նահատակներ, և վշտակցում եմ նրանց, որոնք թաղեցին այդ մեծ աղետի զոհ գնացած իրենց հարազատներին... Այժմ ձեզ է պատկանում խոսքը, ո՞վ օսմանյան մեծ և երիտասարդ ազգ... Եթե դուք չհանեք հայ տղամարդկանց, կանանց ու մանուկների վրեժը, եթե չպատժեք հանցավորներին, ինձ թվում է, թե երիտասարդ տաճկության անունի վրա հավիտենական խայտառակության բիծ պիտի մնա...» («A. Adossidés. Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie», էջ 128):

Եվ այդ բիծը մնաց ու կմնա հավիտենական, որովհետև երիտասարդ տաճիկները ոչ միայն չպատժեցին հանցավորներին, այլև 1909 թվի օգոստոսի 1-ին իրենց հյու կառավարության մի շրջաբերականով հայերի անմեղությունը կիսաբերան խոստովանելուց և կոտորածը «թյուրիմացության հետևանք» անվանելուց ու հանցավորներին պատժել խոստանալուց հետո, շատ շուտով, ըստ իրենց սովորության, ճիշտ հակառակ ուղղությամբ ընթացան և սկսեցին բոլորը միաբերան կրկնել այն, ինչ որ իրենցից շատերը օգոստոսի 1-ից առաջ էլ ասում էին, այսինքն՝ թե դա մի կռիվ է եղել և ոչ թե կոտորած և թե հայերն են եղել նախահարձակ և համենայնդեպս տաճիկները նույնքան են տուժել հայերի խժեղություններից, որքան և հայերը՝ տաճիկների վայրագություններից, ուրիշ խոսքով՝ պատմում են նույն հեքիաթը, որ մեզ հրավցնում է այժմ պ. Ռուստեմ բեյը:

Պարոն Ռուստեմ բեյի պաշտպանած իթթիհատական կառավարության ցինիզմը բնորոշելու համար արժե այստեղ հիշատակել այն փաստը, որ Ադանայի կոտորածի գլխավոր հեղինակը Աբդուլ-Գադերը ոչ միայն չպատժվեց, այլև աղետյալներին օգնող տաճկական կոմիտեի նախագահ նշանակվեց: Բացի այդ, կառավարությունը ուզում էր որբանոցներ հիմնել, ուր Ադանայի կոտորածի հայ զոհերի որբերը պիտի սնվեին տաճիկ որբերի հետ միասին տաճիկ վարիչների ու դաստիարակների «խնամքի» տակ, և «Ադանայի նոր վալի Ջեմալ բեյը եռանդագին պաշտպանում էր այդ ծրագիրը փաստաբանելով, թե «քանի որ այդ երեխաները ոչ հայր ունեին, ոչ մայր, կառավարությունը իրավունք ունի նրանց կրթելու ըստ իր հայեցողության և ոչ ոք իրավունք չունի հակաճառելու դրա դեմ»: Այն էլ պիտի ասել, որ իթթիհատականները փարիսեցիաբար իրենց այդ հայակուլական ծրագրի օգտին առաջ էին քաշում այն ազատամիտ սկզբունքը, թե կրթությունը պիտի աշխարհիկ լինի և ոչ դավանանքային:

Բնչպես տեսնում եք, հայտնի տիպի անդրկովկասյան փարիսեցիները, որոնք այնքան ճարպիկությամբ օգտագործում էին ռուսաց հեղափոխության ազատարար նշանաբանները հօգուտ իրենց ամենահետադիմական ձգտումների, այդ բանումն էլ երիտասարդ տաճիկների հավատարիմ աջակերտներն էին:

Մենք հենց նրա համար այսքան կանգ առանք Ադանայի կոտորածի վրա, որ համաշխարհային պատերազմի ընթացքում Տաճկաստանում և Անդրկովկասում հայության գլխին պայթած ահռելի աղետը Ադանայի ողբերգության կրկնությունն էր, ավելի մեծ չափերով ու ծավալով և մի գործողության (տեղահանության) հավելվածով: Նույն շարժառիթը, նույն ծրագիրը, նույն բեմահարդարը (ռեժիսորը), նույն դերակատարները (միայն թե ուժեղացրած կազմով), նույն դեմոկրատական գրիմը, նույն մեթոդը և ի վերջո՝ փաստաբանության նույն սիստեմն ու նույնիսկ երբեմն կիսաբերան գղջման նույն կատակերգությունը:

Ամեն մի մեղադրյալի գործ քննելիս՝ դատավորները հետաքրքրվում են նրա ոճ-րագործական անցյալով և լուսաբանում են այդ հարցը հին դատավճիռներով: Կոտորածների գործում Տաճկաստանի վարիչ տարրերը հայտնի ռեցիդիվիստներ են, և Ադանայի ջարդը, եվրոպացի հեղինակավոր հետախուզողների պարզաբանությամբ, շատ կողմից լույս է սփռում «սահմանադրական» Տաճկաստանի՝ համաշխարհային պատերազմի ընթացքում կատարած ոճրարարության գլուխգործոցի վրա:

«Հատաջ», 7. III. 1919: